

Ա Ր Ե Գ Ա Մ Ի Ս .

„Նորոգումն է արծարծումն հնացելոյն“:

Հին Իօսոս .

Արարատեան դաշտում վաղուց շտեմնուած երկար ու խստաշունչ ձմեռը վերջապէս անդի է տալիս քո առաջ, գարնանաբեր ամիս հնազանդելով բնութեան անսուտ օրէնքներին, որ նախախնամող Աջը սահմանել է աշխարհիս կառավարութեան համար: Վերջանում է ցրտի և սառնամանիքի թագաւորութիւնը. երկաթ երկաթ թմբեցուցիչ գիշերները փախչում են ահա մեզից. գալիս է կայտառ Արեգ ամիսն և աւետում է մեզ վերանորոգութեան մի շրջան: Օրն ու գիշերն հաւասարում են, լոյսի և ջերմութեան իշխանութիւնն հետզհետէ զօրանում է և ընդարձակուում և գարունն իւր հանդիսաւոր գնացքով բերում է մեզ կենդանիների ծնունդ, բուսականութեան աճումն և մարդիկների վերակենդանութիւն: Մեր ամէնքի ռասանայ գերութեանն յաջորդում է նոր ազատ կեանք ազատ բնութեան սնուցիչ և կազդուրիչ գրկի մէջ:

Այո՛ բարեյաջող փոփոխութիւնների ազդեցութեան տակ, բնական է, որ մենք Արեգ ամսի մէկին (Մարտի 9-ին) գարնան տօն կատարէինք և իրարու նոր տարի շնորհաւորէինք: Սակայն այգպէս չէ, ապաքաղաքար, մեր տօմարի հաշիւը: Ինչպէս որ շատ բաների մէջ մեր կեանքն ու գնացքը կարծես, բնութեան հակառակ է կազմուած, այնպէս էլ տարեշրջանի նորոգութեան յիշատակը: Տօմարադիրը մեզ առել է այժմ մի շատ անբընական ամառոր: Յունուարի մէկին տարեմլտի տօն ենք կատարում մենք առանց իմանալու, որ հնրի օտարամոլութեան, կոյր հեռեղութեան արդիւնք է այդ, որին ընտելացել ենք, շտեմնելով նորա մէջ վնասակար բան, մանաւանդ թէ ազգային ծէան ու սովորութիւնը մոռացած և միշտ մոռանալու պատրաստ լինելով: Չենք կարող սակայն չխոստովանել, որ Յունուարի մէկին ամառորի յիշատակ կատարելու ոչ մի ազգային կրօնական հիմք չունինք: Հայոց համար Յունուարի

մէկը չէր և չէր կարող լինել ժամանակի նորոգութեան սկիզբն:

Ա .

Շատ հիմունքներ կան մտածելու, որ Հայոց հին ամառորի յիշատակն հանդիպում էր գարնանամօխն այնպէս, ինչպէս և հին Պարսից տարեմուտն էր, որ արդի Պարսիկները շնայելով ժամանակների և կրօնի խիստ փոփոխութեանը, պահպանել են գրեթէ նոյնութեամբ: Աստասարակ հին Հայերը և նոյն հարեան ցեղակից աղգերը տարուայ շրջանի մասին այլ կերպ էին մտածում: Սոքա, տարին երկու կէս անելով, գարնանամուտն ընդունում էին իբրև առաջին ամառոր և աշնանամուտն իբրև երկրորդ, երկրագործ և խաշնարած ժողովրդի համար երկու նշանաւոր վայրկեաններ, որոնք շատ սերտ կապ ունին բնութեան երկու շրջանների հետ, առաջինն է աշխատութեան սկիզբը, երկրորդը նորա վախճանն ու նպատակը: Այսպէս ուրեմն կարելի է ասել, որ հին Հայոց մէջ Արեգ ամիսն էր գարնանային տարեմուտը, իսկ Սաւասարդ ամիսն աշնանային:

Յայտնի է սակայն և այն, որ հին Հայերը բացի բնական տարեմուտց ունեցել են և քաղաքականը: Մի այլ անգամի թօգնելով բացատրելու երկուսի տարբերութիւնն և շրջփոխութիւնները, երբ առիթ լինի խօսելու Հայոց Սաւասարդի մասին, այստեղ պէտք ենք համարում յիշել, որ եկեղեցին և ժողովուրդն ընտրել և պահպանել են բնական տարեմուտը: Եւ մեզ համար անհասկանալի է երևում այն թէ Զ. դարում երբ նորոգուեցաւ Հայոց շարժական տօմարը, ինչպէս կարող էին Յուլիս ամիսը համարել տարուայ սկիզբն և 552 թուին Յուլիսի 11-ին նշանակել Սաւասարդի մէկը: Սոյնպէս անբնական է նոյն իսկ Օգոստոսի 11-ը համարել տարեմուտ, ինչպէս որ Հայոց անշարժ տօմարն է ընդունում թէև այդ ունի իւր հաւանական բացատրութիւնը: 2

Թէպէտև ժամանակի ընթացքում կզան

1. Патагоновъ. К. Арм. мѣсяцы.
2. Է. Ա. Արշան. Յուշիկը Հայոցն.

շիտթուծիւններ և փոփոխութիւններ, որոնց պատճառները զանազան են, սակայն գրականութեան, ժողովրդական աւանդութիւնների և եկեղեցական տօմարի մէջ կտրելի է գտնել բազմաթիւ յիշատակների, որոնք ցոյց են տալիս թէ հին Հայոց ամանորի տօնը ժամանակակից էր գարնանամտին և տարեշրջանն սկսուում էր և պէտք է սկսուէր Արեգ ամսով:

Այսպէս մտածելու իրաւունք է տալիս մեզ նախ այն, որ եկեղեցին Արեգ ամսի մէջ սահմանել է այնպիսի յիշատակների, որոնք յիշեցնում են աշխարհիս սկզբնաւորութիւնն և մարդկութեան երկրորդ նորոգութիւնը: Բնական է, որ մարդիկների համար աշխարհի ստեղծագործութեան շրջանն է իսկական դարազուլիւր: Երանի՛ չէ, որ յաւիտենից Արարչի այդ սքանչելի գործի՛ այն է աշխարհի և մարդութեան՝ ժամանակը հաշուի տակ ընկնել կարողանար, և յայտնի լինէր մեզ: Այն ժամանակ աշխարհը միայն մի ամանոր կուենար, մի տօն, մի ուրախութեան յիշատակ: Սակայն մարդու հասողութեանն անմատչելի է այդ հաշիւը, որ գիտունները փորձել են միշտ և փորձում են դուրս բերել իրենց ունեցած շատ աղքատիկ միջոցներով: Մի բան միայն պարզ է, որ եկեղեցին ընդունում է, թէ աշխարհիս արարչութեան ժամանակը համապատասխան է բնութեան վերակենդանութեան շրջանին: Արեգ ամսի 9-ից մինչև 15 հին տօմարով անընդհատ նշանակուած է «յիշատակ արարչութեանն Աստուծոյ», այդ օրերը իրար յետևից կարգում էին հաւատացելոց ունկնդրութեան համար թէ ո՞ր օրն Աստուած ինչ ստեղծեց և պարզաբանում էին այն հայեացքները, որ հին մարդիկ ունէին բնութեան վերայ: ¹ Այդ օրերից մէկում Արեգի 12-ին նշանակուած է «յայսմ աւուր

գարնանամուտ է և յիշատակ չորրորդ աւուր արարչութեան Աստուծոյ», իսկ Արեգի 16-ին նշանակուած է «Զատիկ է և տօն յարութեան Բրիստոսի»: Այսպիսով աշխարհի ստեղծագործութիւնը, գարնանամուտը, Փրկչի ս. Յարութիւնը կազմում են եկեղեցու մէջ մի շրջան, որ յիշեցնում է մեզ թէ ինչպէս է եղել մեր գոյութեան սկիզբը և ինչպէս մեր վերանորոգութիւնը: Այդ յիշատակն անխափան պահպանուել է մինչև այժմ: Իւրաքանչիւր տարի աւագ երկուշաբթի օրն (այս տարի Արեգի 30-ին) եկեղեցին յիշում է աշխարհի արարչութիւնը, կարգում է ս. Գրքից ստեղծագործութեան պատմութիւնը, երգում է շարականներ նոյն բովանդակութեամբ և արծարծում է մեր մտքի մէջ վերանորոգութեան գաղափարը: Յոյնը լինում է աւագ երեքշաբթի օրն, երբ եկեղեցին յիշեցնում է մեզ մարդկութեան երկրորդ նորոգութեան շրջանը ջրհեղեղի պատմութեամբ: Հին ժամանակներն այդ յիշատակներին նուիրուած էին զանազան տեսակ գանձեր ու տաղեր, որ նոյն օրերում երգուում էին անշուշտ, եկեղեցում: Անցել է այժմ այդ ամենի ժամանակը, ոչ ոք մեզ չի կարող այլ ևս բացատրել այդ ամենի խորհուրդը, որ երբեմն ոգի և սիրտ էր տալիս Հայոց եկեղեցական երգիչներին ու ատենախօսներին, լռել է ամեն ինչ և կարծես, քարացել մնացել լոկ աւանդութեան սահմանած ձևի մէջ: Այլ կերպ էին զգում և մտածում մեր նախնիք, նոքա իրենց կրօնական զգացմունքների սրբութեան դրոշմը դրել են բազմահատոր յիշատակարանների մէջ, ապրել ու մեռել են նոյն զգացմունքներով, և անդադար փառաբանել են Աստուծոն հինաւուրց երգչի բերանով, որի ձայնը մինչև այժմ էլ հնչում է: ¹

«Հոյսն ի Հօրէ լուսոյ լուսափայլ զարդարեաց զԱդամ, ի դրախտին եդեալ անմահ տնկոցն երկրագործ, արարածք ամենայն, տուք փառս Արարչին»:

«Սոր արարածք, պատուեալք ի հրեշտակաց, զերծեալք ի խաւարէ առ լոյսն, բարձր արարէք զնա յաւիտեան»:

1. Այս ժամանակ լինում էին մինչեւ անգամ լեզուագիտական բացատրութիւններ, որոնք հիմնուած են միմիայն բացատրողների կամայականութեան վերայ: Ջորջիանակ երկինք, երկեր, տիւ, գիշեր այսպէս են բացատրուած: «Երկինք՝ երկու ինչ՝ օդ և հող»: «Երկեր՝ երկու ինչ՝ հող և ջուր»: «Եւ կոչեաց Աստուած զլոյսն տիւ, զի տեսեաց զերկտասան ժամ աւուրցն ի վերայ երկրի. և զխաւարն կոչեաց գիշեր, որ է գէշ իր կամ գէշ երբ, այս է մութ ու խաւար»: Տես ձեռ. Յայսմաւուրք, 1692 թ. գրուած (մեր սեփական):

1. Եւրոպական աւագ երկուշաբթի եւ աւագ երեքշաբթի:

Հեթանոսական ամանորի յիշատակը ջրն-
ջելու նպատակով արդեօք թէ մարդկային ազ-
գի փրկութեան դարապշուխը աւելի պարզե-
լու համար եկեղեցին սահմանել է բնութեան
տօների օրերում արաչութեան յիշատակը,
դժուար է որոշել: Սակայն, երբ աչքի առաջ
ունենանք հին ժամանակագրական տեղեկու-
թիւնները, որոնցով մեր նախնիք կամեցել են
մինչև անգամ ձշղել աշխարհի և մարդու
ստեղծման օրերն և գտել են, որ այդ օրերն
Արեգ ամսի մէջ են, այն ժամանակ կը տես-
նենք, որ նախնիք արդարև գարնանամտին և
Արեգ ամսին տուել են շրջանի սկզբնաւորու-
թեան խորհուրդ: ¹

Եղել է մի ժամանակ, որ նոյն իսկ Հայոց
նոր տարին էլ այդ օրերումն էր լինում: Այս-
պէս՝ յայտնի է, որ 606 թուին Նաւասարդ
ամիսը Զատիկի օրերն էր և Նոր կիրակին հան-
դիպեցաւ «յելս Նաւասարդի»: ² 989 թուին
Քաղոց ամսի 17-ին ս. Աստուածածնի վերա-
փոխման տօն էր, ³ որ նշանակում է թէ ա-
մանորի ժամանակն եղել է մօտաւորապէս
Մարտ Ապրիլ ամիսներին: Այսպէս է հաս-
կացել և Դաւիթ Սալաձորեցին, որ երգում է. ⁴

«Գարուն տարի, ամիսքն ճիւղ,
Սեաւ ու սպիտակ պտուղ շարուն,
Երկոտասան ամիսք որ կան,
Մ'արտն է խարխիւ, հիմն տարուն».

Բ.

Եթէ ժողովրդական ծէսերն ու աւան-
դութիւններն աչքի առաջ ունենանք, կը
տեսնենք, որ գարնանամտի օրերն են և տա-
րեմտի օրեր: Այդ յիշեցնում է Միջինքը
(Միջունք), որ սովոր ենք կարծել թէ մեծի

1. «Մարտի 15 (Արեգ 7) սկիզբն է արարչութեան»: «Մարտի 22 (Արեգ 14) Ընելութիւն մարդոյն»: Տնս ծնո-
ւատենադարանի Մ. Աթոռոյ № 244:
2. Ուխտանէս եպ. 1Ե.
3. Ասողիկ, Գ. 27:
4. Նոր ժողովածու, Բ. պրակ, 68: Աստուածաշնչի
թարգմանութեան մէջ մի տեղ Արեգ ամիսը դրած է Նիսանի
փոխարէն, որ հին ժամանակ Բաբելոնի եւ Ասորեստանի
տարեմտի ամիսն էր (Գրքը Եսթերայ, Ը. 9). միւս տեղերում
դրուած է Աղար ամսի փոխարէն, որ նոցա վերջին ամիսն
էր համապատասխան մեր Մոհականին (նոյն գրքը Բ. 16 եւ
ԺԱ. 2): Բանի որ նոցա էլ երկու ամիսօր ունէին Նիսան —
գարնանամտին եւ Թշրին — աշնանամտին, Արեգը Նիսանի
տեղը սխալ չէ:

պահոց կէս շրջանը որոշող օրն է: Երբ ու-
շադրութիւն դարձնենք Միջինքի սովորու-
թիւնների վերայ, կիմանանք, որ այդ բացա-
տրութիւնը գոհացուցիչ չէ: Մի քանի տեղ
Հայ ժողովրդի մէջ մեծի պահոց միջինքին այն
են անում, ինչ որ ուրիշ գաւառների Հայ
ժողովուրդն անում է արդի նոր տարուն, այն
է յունուարի 1-ին: Այսպէս օրինակ՝ Ապա-
րանում միջինք ասածը մի մեծ հաց է, որի
մէջ մատանի կամ մի այլ բան են պահում,
և եփում են մեծ պատի չորրորդ շաբաթուայ
չորեքշաբթի օրը, ապա հինգշաբթի երեկոյեան
ժամից յետոյ ամբողջ ընտանիքով ժողովուրդ
են ու հանդիսաւոր կերպով մաս մաս անում
ընտանիքի անդամների մէջ. ում որ պահած
բանը դուրս գայ, տարուայ բաղդը նորան է
վիճակուած: ¹ Նոյն այդ ծէսը պահել է Շի-
րակայ ժողովուրդն և կատարում է տարե-
մըտին: Երեսն ընկուզով ու չամչով զարդա-
րած մի մեծ կլոր հացի մէջ պահում են մի
արծաթէ դրամ և եփում են տաբեմտի
նախընթաց օրը, այդ հացի անունն է Տարի:
Մի ժամանակ կար, երբ ամանորի օրն առա-
ւօտեան լուսաբացին շատ վաղ Տարին դուրս
էին բերում, նախապէս վառելով նորա շուր-
ջը ժամի մոմեր և շարելով քաղցրեղէններ,
Երեսները դէպի աղօթարան ուղղած ամէնքն
աղօթում էին և ընտանիքի մեծը Տարին դո-
րում էր, ապա իրարու շնորհաւորում էին,
մի մի պատառ քաղցր բան ձաշակելով: Տարին
ներս բերելուց յետոյ պահում էին, որ նշա-
նակած օրը կտրեն և իմանան թէ տարուայ
բաղդն ում է վիճակուած: Այդ օրը սովո-
րաբար յունուարի 2-ին էր լինում, որ բաղդ
փորձումի օր է ասուում: Ընտանիքի անդամ-
ներից իւրաքանչիւր ոք թէ ներկայ և թէ
բացակայ անշուշտ իւր բաժինը պիտի ունե-
նայ, և ում որ ելնէր արծաթ դրամը, նա
պարտաւոր է այդ իւր բաղդը պահել սրբու-
թեամբ և անկորուստ: Այս սովորութիւնը
որքան գիտենք, պահպանում են և Ղրիմի
Հայ դաղթականները, թէև ինչպէս Շիրակում
նմանապէս և հեռաւոր գաղթականների մէջ
այդ ծէսն էլ հետզհետէ մոռացուում է: Տա-

1. Փշրանքներ ժող. բանաս. Գ. Ս. Յովսէփեանց, 70:

րին պատրաստելուց զատ ընտանիքի իւրաքանչիւր անդամի համար շինուած են տեսակ տեսակ հացեր՝ խամաջուկ, քիսայ, սանդր, հիւս և այլն: Նշանաւոր է քիսէն, որ ընտանիքի աշխատաւոր տղամարդիկներին համար է պատրաստուում: Ընկուզով չամշով լցուած, քսակի ձև ունեցող խմորեղէն է այդ, որ պիտի դուշակէ հարստութիւն և եկամտի առատութիւն: Չեւաւոր խմորեղէններէց այնպիսիները, որոնք մարդու նմանութիւն ունին, թերեւս մնացորդ են հին հեթանոսական յիշատակներին իրրև կուսքերին յատկացած անտական նուէր: Ապարանում այդպիսի խմորեղէններն աւելի յիշեցնում են երկրագործական կեանքի ծէսերն ու տենչանքները: ¹

Այսպէս ուրեմն Միջինքն և Տարին ոչ այլ ինչ են եթէ ոչ ժողովրդի մէջ յայտնի բազմ որոշող հացեր: Սոքա երկուսն էլ պահել են հին տարեմտի յիշատակը: Բանի որ Հայոց մէջ յունուարին տարեմուտ տօնելը տեղական չէ, այլ մտած է դրսից, կարելի է կարծել, որ տեղ տեղ հին սովորութիւնը պահելով ժամանակն են փոխել, ուրիշ տեղեր էլ թէ ժամանակն և թէ սովորութիւնն անփոփոխ է մնացել:

Թէ դարնանամտին, որ սովորաբար հետու չէ և Չատկի օրերից, եղել է հին տարեմտի սկիզբը, այդ տեսնում ենք և ուրիշ աւանդութիւններից, որ պահուել են ժողովրդի մէջ: Զորօրինակ Ակնցիք Չատկի պարերի մէջ երգում են. ²

«Շնորհաւոր նոր տարի»

Սոր տարի ու նոր բարիս:

Ախալքալակի գիւղացիք, երբ նոր են դուրս գալիս երկիրը մշակելու, հռուսիլի մէջ երգում են. ³

«Արևը գնաց» Միջունքը մնաց,

Զօրանաս, հօտադ, զօրանաս:

Միևնոյն ժամանակ ժողովուրդը տարին երկուս է բաժանում՝ գարուն և աշուն, միւս երկու եղանակները, կարծես, ծառայական մասեր են: Դեռ հին երգիչն Մտեփաննոս, մուրթեան փոփոխութիւնների երկու շրջանն

է համարում երջանկութեան և թշուառութեան օրեր. ¹

«Աշուն էր, եղև զարուն»

Յամաքեցաւ ձիւն սարերուն

«Աշուն էր, եղև զարուն»

Չայն անուշ երեկ հաւերուն

«Աշուն էր, եղև զարուն»

Կանաչաւ երես դաշտերուն»

երգելով վերանորգութեան յիշատակներն է արծարծում և զուարճանում: Իսկ երբ ձմրան արհաւիրքն է մտաբերում, նորա խօսքերն այսպէս են փոխուում.

«Գարուն էր, եղև աշուն»

Ու թափաւ թուփ ծառերուն.

Ու աւաւ ամպն ի յարեւելք»

Չիւն երբ ի վեր սարերուն....

«Գարուն էր, եղև աշուն»

Վերացաւ վէլքն ագամորդոյն և չն:

Երգիչն իւր ժողովրդի ոգուն շատ հաւատարիմ է մնացել, մինչև օրս էլ Ակնցիք իրենց առածների և ասացուածների մէջ, կարծես միայն տարուայ երկու եղանակն են ձանաչում. ²

«Գարնան արեւը տղուս ու հարսիս վրայ»

Աշնան արեւը փեսիս ու աղջկիս:

Կամ թէ՛

«Գարնան եքսէն (յաջորդ) աշունն է»:

Ժողովրդի այսպիսի հայեացքի յայտարարն է, անշուշտ և աղանձի (սէճաղ) գործածութիւնը: Աղանձը ոչ այլ ինչ է, եթէ ոչ բոհրած ցորեն, հետո ուրիշ չորացուցած կամ բոհրած ընդեղէններ խառնած, որ շատ տեղ ուտում են չամշով, և Միջինքին տներն իրարու բաժին են ուղարկում իրրև լաւ բան: Սակայն աղանձի գործածութիւնը, թէև ոչ նոյն ձևով, տեղի ունի և աշնանը: Յայտնի է, որ քաղի ժամանակ, երբ օրանը դաշտում է, գիւղացիք սովորութիւն ունին ցորենի հասկերից խարոյկ վառել, և երբ բոցն իջնում է, մրկած հասկերը շփում են ափի մէջ և նոր բոհրած հատիկները տաք տաք ուտում են իրրև աղանձ, արդեօք այդ էլ մնացորդ է հին հեթանոսական պատա-

1. Փշոմքներ. 70:
2. Հնութիւնք Ազնայ, Ե. Ճամիկեան. 126:
3. Հաւատքի բուրմուռք, Ե. Լաւայեան. 57:

1. Նոր ժողովածու, Բ. Պրակ. 9:
2. Հն. Ազնայ 203:

բազմերի թէ զիւրացի չարածձի տղայոց մի խաղ է որ ընդհանրացել է, չենք կարող ճշգրտել: Մեզ պատահական և անհիմն չի երևում այդ: Գարնանամտին հին ցորենն են աղանձ անուամ աշնանամտին նորը: Ժամանակների և իրողութեան այս զուգարկաբութիւնն անխորհուրդ համարել կարելի չէ: Գարնանամտի աղանձն, անշուշտ յիշեցնում երկրագործական աշխատութիւնների սկիզբը: Չէ որ եկեղեցին էլ ընդունել է սերմնօրհնէքի ծէսը, որի մէջ առ Աստուած ուղղած խնդրուածքի մէջ այս կայ շայնաց, ասում է, ի սերմանելս մեր, որ կարողք ես առանց սերման շնորհել հասկըս և առանց կերակրոյ ընուլ զքաղցեալս, օրհնեալ Տէր, զարտօրայս մեր, զի առանց ամենայն փեսաց անուցանիցեն զպտուղս իւրեանց: ¹ Այստեղ երկու բան կարող ենք մտածել, կամ եկեղեցին ինքը նուիրագործել է մի հին ժողովրդական ծէս, կամ հաստատել է այդ ծէսը մշակութիւնների սկզբնաւորութեան ժամանակ իւր հօտին յոյս և մխիթարութիւն ներշնչելու համար, այսօր ազաբաղդարար այդ անմեղ ծէսն էլ է մոռացուել: Եթէ զարնանամտի աղանձն երկրագործական տարեմտի օրհնութեան առարկան է, պիտի մտածենք, որ աշնանամտի աղանձը նոյն օրհնութեան պատուին է, որ իբրև երախայրիք ընծայուում է ծիրոջ սեղանին, թէև շատ անգամ առանց խանձելու, այլ կալերից բուռ բուռ իւրաքանչիւր ազքատի և տնանկի բաժանելով: Օրհնեալ սովորութիւնն որ իսկապէս շտեմարանն է երկրի հացի առատութեան և լիութեան:

Գ.

Ըստ աւանդութեան՝ Արեգը Հայկայ դուստրներից մէկն է. իբրև կանանց կոչումն այդ անունն Հայոց մէջ չկայ, ունինք Արեգնազան անունը, որի երկրորդ մասը՝ Սազան եղել է հին ժամանակ, ինչպէս երևում է Սազինիկ (Թերևս Սազանիկ) անունից: ² Եթէ այդ աւանդութեանն հետևելու լինինք, կարելի է կարծել, որ Արեգ մի զիցուհի էր և թերևս դարնան աստուածուհի, թէև այդ մասին որոշ ցուցումներ չկան. յայտնի է միայն, որ Արեգ անունով կոչուում էր նաև Հայոց ամիսների առաջին օրը: Բանն այս է, որ հին ժամանակ տարին բաժանուում էր 12 ամիսների, իւրաքանչիւրն 30-ական օրով, կար և մի ամիս 5 օրով, որ կոչուում է Աւելեաց: Իւրաքանչիւր օրը մի ոգու կամ աստուածութեան խնամքի տակ էր և կրում էր նորա անունը, այդպէս՝ հներն օրերին առանձին առանձին անուններ էին տալիս, որոնց թիւն է 30. Աւելեաց օրերն էլ իրենց ջոկ անուններն ունէին: Պարսից մէջ առաջին, ութերորդ, հնգիտասաներորդ և քսաներորդերորդ օրերը Որմզդի խնամքի տակ էին և կոչուում էին նորա անունով և մահկիրներով, այդ չորս օրը յիշեցնում էին աշխարհի արարչութեան մասին և չորս եօթնեակների սկզբներն են, հաւասար մեր տերունական կամ միաշաբաթ օրերին: ¹ Եթէ նոյն կարգով ընտրելու լինինք Հայոց օրերը, կր տեսնինք, որ առաջին օրը կոչուում է Արեգ, ութերորդը Միհր, հնգիտասաներորդը Արամազդ, և քսաներորդերորդը Ծմակ: Այս չորրորդ անունը մեզ կասկածելի և մութն է թուում (դժուար թէ ծանօթ ծմակ բառը լինի), միւս երեքի մասին կարելի է ասել, որ հիթանոսական սրբութիւնների անուններ են զոցա հետ կարելի է միացնել Անահիտ 19 և Վահագն 27 օրերի անունները, նմանապէս և Նրեգհան (Թերևս Տիր) 11 և Վանատ (Թերևս Վանատուր) 14 օրերի անունները, որով հին Հայոց օրերից եօթը կոչուել են աստուածների անունով: Մնացեալ օրերից չորսը մոլորակների, եօթը լիւնների, երեքը ծանօթ աշխարհազրական տեղերի մէկն Արամի և ութն անծանօթ անուններ են: ² Իւր ժամանակին թերևս յաջողուի մեզ պարզել բոլոր այդ անունների նշանակութիւնն և կարող հնութեան յիշատակների հետ, այստեղ այն միայն յիշելու պէտք ունինք, որ այդ անունները մինչև անգամ զրականութեան

րելի է կարծել, որ Արեգ մի զիցուհի էր և թերևս դարնան աստուածուհի, թէև այդ մասին որոշ ցուցումներ չկան. յայտնի է միայն, որ Արեգ անունով կոչուում էր նաև Հայոց ամիսների առաջին օրը: Բանն այս է, որ հին ժամանակ տարին բաժանուում էր 12 ամիսների, իւրաքանչիւրն 30-ական օրով, կար և մի ամիս 5 օրով, որ կոչուում է Աւելեաց: Իւրաքանչիւր օրը մի ոգու կամ աստուածութեան խնամքի տակ էր և կրում էր նորա անունը, այդպէս՝ հներն օրերին առանձին առանձին անուններ էին տալիս, որոնց թիւն է 30. Աւելեաց օրերն էլ իրենց ջոկ անուններն ունէին: Պարսից մէջ առաջին, ութերորդ, հնգիտասաներորդ և քսաներորդերորդ օրերը Որմզդի խնամքի տակ էին և կոչուում էին նորա անունով և մահկիրներով, այդ չորս օրը յիշեցնում էին աշխարհի արարչութեան մասին և չորս եօթնեակների սկզբներն են, հաւասար մեր տերունական կամ միաշաբաթ օրերին: ¹ Եթէ նոյն կարգով ընտրելու լինինք Հայոց օրերը, կր տեսնինք, որ առաջին օրը կոչուում է Արեգ, ութերորդը Միհր, հնգիտասաներորդը Արամազդ, և քսաներորդերորդը Ծմակ: Այս չորրորդ անունը մեզ կասկածելի և մութն է թուում (դժուար թէ ծանօթ ծմակ բառը լինի), միւս երեքի մասին կարելի է ասել, որ հիթանոսական սրբութիւնների անուններ են զոցա հետ կարելի է միացնել Անահիտ 19 և Վահագն 27 օրերի անունները, նմանապէս և Նրեգհան (Թերևս Տիր) 11 և Վանատ (Թերևս Վանատուր) 14 օրերի անունները, որով հին Հայոց օրերից եօթը կոչուել են աստուածների անունով: Մնացեալ օրերից չորսը մոլորակների, եօթը լիւնների, երեքը ծանօթ աշխարհազրական տեղերի մէկն Արամի և ութն անծանօթ անուններ են: ² Իւր ժամանակին թերևս յաջողուի մեզ պարզել բոլոր այդ անունների նշանակութիւնն և կարող հնութեան յիշատակների հետ, այստեղ այն միայն յիշելու պէտք ունինք, որ այդ անունները մինչև անգամ զրականութեան

1. Մայր Մաշտոց, 98:
 2. Մովս. Խորեն. Բ. 65:
 Ժողովրդի մէջ կան նաեւ Ն ա գ ե թ, Ն ա գ լ ու, Ն ա գ խ ա թ ու ն անուններ, որոնց մէջ Ն ա գ արմատը Թերևս նոյնը լինի:

1. Spiegel. F. Eranische Alterth. III. 667.
 2. Արշանեան 2. Գ. հին հայաստ. 145. 109:

մէջ իբրև օրերի հոշումներ զործածական եղած չեն և մեր յիշատակարաններում զօյութիւն ունին իբրև հնախօսական մնացորդ: Աչքի առաջ ունենալով որ Արեգ անունն օրերի ցանկի մէջ առաջին տեղն է, պէտք է կարծենք, որ հին ժամանակ Արեգ ամիսն էլ Հայոց ամիսների շարքում առաջինն էր և, զարմանամտի հետ կապ ունենալով, տարեմբաի ամիսն էր:

Սովորաբար այս կարծիքն է մնացել Հայոց մէջ թէ Արեգ ամիս անունն արևի անունն հետ է կապուած: Արեգունն կամ արեգունի արեգջեր, արեգդէմ բառերն իսկապէս և նշանակում են արեային արևոտ արեկերես տեղ:

ԺԳ. դարու մեր վարդապետներից մէկը՝ Վանական այգպէս է փորձում մեկնել Արեգ անունը որ թէև զօհացուցիչ չէ, բայց թերևս հիմնուած է հին աւանդութեան վերայ.¹ «Արեգ» ասում է, որպէս թէ յառնեն քոյսը» (կամ) «Արի, ասէ, հիւսիսի և նկ հարաւ, որ է զարնան ամիսն.» (կամ) «արեգակն» մեծ ակն ասի կամ լուսոյ ակն: Այս խօսքերից երևում է, որ Արեգ զարնան ամիս է, մի և նոյն ժամանակ այդ բառն իբրև մասն արեգակն խօսքի նշանակում է մեծ կամ լուսաւոր, այս վերջին իմաստին թերևս կարելի լինի մօտեցնել արեգ բառն, եթէ աչքի առաջ ունենանք սանսկրիտ արկա=արև խօսքը, որ նշանակում է վառվառն, արկ արմատից, որ է վառել: Չենք կարող ասել, որ Արեգ իբրև արևի հոմանիշ Հայոց հեթանոսական սրբութիւն չէր, սակայն զիտենք, որ արեգ կամ արեգակը Միհրի պատկերն էր, ուրեմն Արեգ կամ մի տարբեր աստուածութիւն է, կամ Միհրի մակիրներից մէկը:²

Գ.

Ժողովրդական բարբառի և ուանդութիւնների մէջ արև, արեգակ շատ է ասուում. իսկ արեգ, որքան զիտենք, պատար-

հում չէ ոչ իբրև արևի հոմանիշ և ոչ իբրև առանձին բառ: Այն խօսքերը, որոնք արեգակն բառի նման են երևում կազմուած, մասերի բաժանուել կարող են և իւրաքանչիւր մասն էլի զործածական է լեզուի մէջ, զորօրինակ փայլակն, փայլ կայծակն, կայծ, աղբերակն, աղբիւր և այլն: Արեգակն խօսքի համար այդ ասել դժուարին է, եթէ վերը բերուած բարդութիւնները նկատելու չլինիք (արեգ-ջեր, արեգ-դէմ ևլն): Իսկ եթէ թոյլ տալու լինինք արեգակն բառի նոյնութիւնը արեգի հետ, այն ժամանակ կը տեսնենք, որ Արեգի գաղափարը շատ ընդարձակ նշանակութիւն ունի ժողովրդի լեզուի մէջ: Յայտնի է, որ արեգակն արդարև իբրև աստուածային յատկութիւն ունեցող բան հին ժամանակ վսեմ և նուիրական էր բանաստեղծութեան մէջ. արդի ժողովուրդն էլ, իւր երգերի և առասպելների մէջ շատ բարձր յատկութիւններ է ընծայում նորան: Մինչդեռ լուսինը միայն ցրտութեան պատճառ է համարուում արեգակն է, որ ազատութիւն է տալիս բնութեանը, բանալով նորա սառուցիակ կապանքները:

«Անդան սատաֆէ, ոտքերն արծաթէ, Ղուսնակն ի փակ, ըանլիքն արեգակն»:¹

Հայոց մայրերն օրօրոցի երգերի մէջ արևն են ճանաչում իրենց մանուկների ապահով ընկեր, օթեան և պաշտպան.

«Գիշերն օրօրեմ խեա ձէտ պէտ աստղերաց, Յերեկն օրօրեմ խեա ծաղկած արեգական».

Վերի մաքին քէ ծիծ տէր.

Ղուսնեակ քէ գարդար ասէր.

Արեգակ քէ դաղրական էլնէր»:²

այսպէս է միմնջում Վանեցի մայրն իւր զաւակին յանձնելով բնութեան խնամքին. իսկ Ակնցին օրհնում է մատաղ սերնդին արևի պարգևած աստուածութիւնները ցանկալով նորան.³

«Ապրիս դուն հօրով մօրով
Ու լցուի սրտիկդ արեւով
Սրտիկդ արեւով լցուի
Մեր դուռին կարմիր խնձորով».

1. Տես Հայկազ. քառարան Արեգ բառը:
2. Արեգ անունն քաղաքութեանը Թերեա նպատանն եւ հետեւեալ յատուկ անունները. Արեգ դունն (Ագաթ. ԺԷ). Արեգունի գաւառ, Արեգնի վանք (Միսական 56, 525, Միսուան, 64, 470)

1. Մանանայ, 8 Վ. Սրուանծտեան. 294:
2. Վանայ Սազ, Գ. Եէրենք. 82, 85:
3. Հնութիւնք Ակնայ. 408.

Ո՛վ անցնիս վարդէն առնէ,
Ո՛վ գառնայ կարմիր խնձորէն:

Գիտենք որ արեւ Հայոց լեզուի մէջ նշանակում է կեանք. «երկէն արեւ լինիս» շատ արեւ հոմանիշ են երկարակեաց խօսքին. երգման սիրոյ և գուրգուրանքի դարձուածներ են «արեւս վկայ արեւիդ մատաղ արեւդ սիրես» և այլն. յուսահատութեան և տխրութեան նշան է ասել «արեւս մարաւ» «իմ արեգակս խաւարեցաւ» թշուառին և դժբաղդին արեւամուտ անուանելը ինչպէս որ վաղամեռիկ մէկին էլ հին ժամանակ «արեւալէտ վախճանեալ» են ասել:

Ժողովրդական մի երգից երևում է, որ դարիպը գարնան ժամանակ ուրախանալու փոխարէն տխրում է. նորան գարնանային արեւն երևում է իբրև մէզ ու մատախուղ.

Պանչէ՛ կռունկ, կանչէ՛ քանի գարուն է,
Ղարիպներու սիրտը զունդ զունդ արուն է,
Բու իջած տեղդ չայիր չիման է,

Աշխարհիս արեգակ ինձի դուման է:²

Այս է թերևս պատճառը որ ժողովրդի մէջ ամենալաւ բարեմաղթութիւնն է ասել «արեգակով կշտանաս» և զուշակել թէ «ձեր տունն արեւով լցուաւ» ձեր սեղան կարմիր խնձորով: Երկրի մշակութեան ժամանակ արեգակի օգնութեանը մեծապէս կարօտ ժողովուրդը բնական է որ նորա ծագումն համարում է իբրև փակ շտեմարանի բացումն.

«Բանինս էրկնուց ընցաւ,
Էրկնուց դռներ բացուաւ.
Ձեր սեղան օսկի խնձորով
Ձեր բակ արևու շաղով լցուաւ»: ³

Այս ամենից երևում է, որ եթէ Արեգ նոյն է ինչ որ արեգակն այն ժամանակ այդ ամիսն է, որ հայեցնում է սառուցները, ջերմութիւն է ապիս երկրին կենդանութիւն, լիութիւն մարդիկներին, տունն ու բակն արեւի պայծառութեամբ և սեղանը կարմիր

օսկի խնձորով լցնում. տարուայ բաղդն ու վիճակը որոշող ուրախարեր ամիս, որ չէր կարող բնութեան գրկում ապրող հին հեթանոս Հայերի կեանքի մէջ նորոգութեան շրջանի սկիզբն չկազմել:

Այդ աւելի լաւ տեսնուում է և տեղ տեղ պահուած ուրիշ անտախապաշտութիւններից այսպէս օրինակ՝ Ալաշկերտցիք մի սին հաւատունին թէ կան չար ոգիներ, որոնք ձմեռն իրենց դռներում են բնակում և փնասում են իրենց կովերին, եղներին, գոմէշներին և այլ օգտակար ու պիտանի կենդանիներին. այդ չար ոգիների անունն է շուռտ: Ուրիշ գաւառներում էլ յայտնի է շուռտի գաղափարը. սակայն Ալաշկերտցւոց մէջ այդ չար ոգին փետրվար ամսի տէրն է: Մարտի մէջ (Արեգ) նոքա կատարում են շուռտանանի ծէսը՝ այն է փետրուարը վռնաում են և մարտը ներս են առնում:

«Շուռտ ի դուրս
Մարտ ի ներս»:

Այս է ծէսի նպատակը: Եթէ յաջողեցան շուռտը տանից հեռացնել և մարտը ներս առնել, բաղդը կը մանի իրենց մէջ և անով տեղով երջանիկ կը լինին (գօվլաթը տուն կուգայ և կը մնայ). եթէ չկարողացան, շուռտըն իբրև չար և փնասակար ոգի կըսպառէ տան ամեն բարին և աղքատութիւն ու խեղճութիւն կը բերէ: ⁴ Թէ որպիսի հեթանոսական հայեացքների և ծէսերի մնացորդ է այդ շուռտահանը, դժուար է այժմ որոշել. բայց որ հեթանոսական է, և շատ սերտ կապ ունի երկրագործ և խաշնարած ժողովրդի կեանքի ու գաղափարների հետ, և միանգամայն որոշում է ձմրան վախճանի և գարնանամտի նշանակութիւնը, այդ շատ ակնհայտ է. «Շուռտ ի դուրս, մարտ ի ներս» ոչ այլ ինչ է եթէ ոչ մի բնական ձայն ցնծութեան, որ հեռանում է մաշող, սպառող ձմեռն, և գալիս է զուարթարար գարունն, կրք պիտի «բակն արևու շաղով և սեղանն օսկի խնձորով լցուի»: Իբրև երկրագործ և խաշնարած ժողովուրդ՝ Ալաշկերտցին այդ բնական ձայնն հանում է Մարտի (Արեգի) ամեն մէկ օրուայ համար:

1. Հին հուանոց. 90:
Ուշադրութեան արժանի են եւ յատուկ անուններս Արեւիք կամ Արեւիք (Արեւեաց տուն) գաւառ, Արեւոց կամ Արեւու սլուր, Արեւէս գետ, եւ Արեւիկ կամ Արեւ անձնական անուն (Ջննդը, 41. Միսական 208 և 174):
2. Ջաւախքի քուրմ. 54:
3. Մանանայ, 299:

Մարտ վեց՝ ձուն վըր ձան ցեց:
 Մարտայ ութին՝ սարեկ վըր բզին:
 Մարտայ քննին՝ լակակ վըր քննին:
 Մարտի քսան՝ լծքեր յարաներ պապանն:¹

Ե.

Գարնան տօնի յիշատակն Արեգ ամսի մէջ
 խառնուել է ծաղկազարդի տօնի հետ: Մեզ
 յայտնի չէ թէ ե՞րբ և ո՞վ կնքեց այդ տօնի
 անունը: որ աւելի ուղիղ գործ է ածուում
 իբրև ծաղկազարդ և հասկանալի է ողորդ-
 ման կամ արմաւենեաց տօնի համար. այդ
 է Բրիտանոսի Երուսաղէմ գալու յիշատակը:
 Սակայն ո՞վ և կնքած լինի ծաղկազարդ անու-
 նը՝ աչքի առաջ է ունեցել, անշուշտ գար-
 նան բացուելը:

Մարտն կուգար ծաղկներով

Յերկնից հաւերն կարգալով:

Երգել է Մուրատ Միկարն, յիշելով «բարկ
 արեգակի» ծագելն և «աստիկ ձների» հալուե-
 լը:² Հայոց երկրի համար Արեգ (Մարտ) ամիսն
 է հարկէ՝ ծաղկաբեր ամիս է, և օտարոսի չէր
 կարող լինել ծաղկաբարի անունը փոխել ծաղ-
 կազարդ Այդ Ժամանակ արդէն դուրս եկած
 են լինում ձնծաղիկն ու մանուշակը՝ շատ
 տեղ նոյն իսկ ծառերն էլ զարդարուած են լի-
 նում իրենց ծաղիկներով, բնութեան այս
 ծաղկազարդելն է՝ որ ողևորութեամբ նկարա-
 րում է Դաւիթ Սալաձորեցին:³

Սախ ձնծաղիկն ու ջրիկտամ բարգն
 ու խաժուակն յառաջագոյն:

Սոքա չորան միարանին, ու ձայն աճեն
 ծաղիկներուն:

«Ծաղիկնք» զարթիք ի խոր քնոյն, քանի
 պառկիք ներքև հողոյն:

«Զարթիք» աշխարհս ծաղկեցուցէք,
 բիւրք ի բիւրոց անթիւ անհուն...»

Ծաղկազարդին եկեղեցին ուն է օրհնու մ:
 օրհնած ուսը տարուում է աներն և պահու-
 ում ամրողջ արարի իբրև տան մէջ բարի բերող
 և պաշտպանող մի նշան: Այդ օրն երբայցեոց
 անուկներն նման Հայոց երեխաներն էլ ցըն-

ծութեան պաղպակներ են արձակում: բայց
 նոքա որ ոչ երբայցեի են ծանաչում, ոչ ողո-
 դման տօն զխոն, իրենց համար առանձին
 ծէս ու հանդէս ունին, որ պղպային է և թե-
 բևս նոյն իսկ քրիստոնէութիւնից էլ հին:
 Ամեն մի երեխայ ունի իրեն ձեռքը մի մի
 ճրոճընակ կարկաչայ փայտից շինած տա-
 բորինակ ձև ու կազմութիւն ունեցող կոշնակ-
 ներ, որոնք երեխաների ձեռքով շարժուելով,
 խիստ սուր ու բութ ձայներ են հանում և
 մի տարօրինակ ներգաշնակութիւն են կազ-
 մում այն մանկական երգերի հետ, որոնք
 հնչում են այն օրն ամէն մի տան առաջ:
 Եթէ երբայցեի մանկունք պղպակում էին
 «Ովսաննայ» օրհնեալ եկեալ անուամբ Տեառն»
 Հայոց մանուկները կարծես թռչունների
 կարկաչն ու ձուռողիւնն յիշեցնելու համար
 իրենց կարկաչաներն են նուագում և ամեն
 տանից ձու ժողովում Զատիկի համար:

Վարկաչայ կարինկաչայ

Սև մողի սևսև մողի

Մունկ առէք, մոմ առէք

Տասուերկու պատարագ առէք:

Իմ կարմիր հաւիթս դուս բիրէք:

Երգում են նոքա և երբ իրենց բաժինն
 աւնում հետանում են մինչև հետեւեալ տու-
 նը՝ ճանապարհին նուագում են իրենց ձր-
 ձրանակը կարծես ծաղրել ուղելով իրենց
 դանդաղ ուղեկիցներին:

«Ո՞րձրձ ձրձրձանակ»

Ասու հալալ պիպեռնակ»

Ընկերս ընկաւ ծովը ծիրանը»:

Հրաժարուում ենք որևէ բացատրու-
 թիւն ապու մանկական այս երգերին: Բա-
 ւական է միայն յիշել, որ այդ խաղերը ոչ մի
 կապ չունին բուն եկեղեցական տօնի հետ և
 ժողովրդական են: Տարակոյս չունինք՝ որ դո-
 քա էլ գարնան տօնի և արեւմտի հին յի-
 շատակներն են պահում իրենց՝ մէջ:¹

Զ.

Արեգ ամիսն յիշեցնում է մեզ և մի
 այլ նորոգութեան մասին: Աւելի քան հազար

1. Բաղրեանը Ջրաբ. գաւառ, Ս. Հայկունի, 248 եւմ:
 2. Նոր ժողովածու, Բ. Պրակ. 5.
 3. Նոյն 68.

1. Սարգսեան Ս. Ազուցեցոց քարտան. Բ. 27 յիշում
 է տեղական ծէս: Նկարագրում է Ազուցեցոց կարկաչան
 ու ճրոճընակը (Ճրճանակ եւ փոստեմ): Կարկաչայի
 երգի մի այլ յօրինում անս Փշրանքներ էր. 71:

վեց հարիւր տարի սօրանից յառաջ Հայոց հոգեւոր փրկութեան երկուների օրերն էին այս օրերը: Ս. Գրիգոր Լուսաւորիչ քարոզում էր Տրդատ արքային Բրիտտոսի աւետարանն ինքը կրելով պէսպէս անտանելի տանջանքներ: Աստուծոյ մարդու անյողողոզ հաւատը և համոզմունքներն վսեմութիւնն աղամանդի կարծրութեան չափ անգծելի և անսղարտ մնացին այն ժամանակ տակաւին հեթանոս արքայի բռնութեան առաջ, որն ինքն էլ իւր նախնեաց սրբութիւնները պաշտպանելու ոգևորութեամբ էր գործում:

Այլ մի օտարական և անաշխարհիկ եկիր յարեցար ի մեզ, և զի՛նք իշխես պաշտել զաստուածն զայն, զոր ես ոչ պաշտեմ հարցնում էր Ս. Գրիգորին թագաւորը, շատ բնական համարելով այն թէ ո՞վ ո՞ւմ ծառայում է, նորա աստուածն էլ պիտի պաշտեմի սխալ համոզմունք, որ յատուկ է աշխարհային մոլորութիւններին, յատուկ է նոցա որոնք հոգեւոր կեանքի վերայ նայում են իրրև աշխարհային բարիքի վերայ: Սակայն այդպէս չէ ճշմարտութիւնը: Այն օրից երբ ճշմարիտ յուսոյ ծառայութիւնը Գողգոթայի բարձունքից ծագեցին «ի խաւարի նստելոցս» սրտերի մէջ, այն օրից արդէն ամէնքը զիտէին որ «զԱստուծոյ պատին և զպաշտօն ոչ ումք վայել է տալ», զիտէին որ «ծառաները պիտի հնազանդ լինին իրենց մարմնաւոր տէրերին», զիտէին և համոզուած էին որ նոյն իսկ այգպիտի մարմնաւոր ծառայութեան և հնազանդութեան համար նոցա վարձատրոյր միմիայն Աստուած է: «Եւ քեզ միամտութեամբ վաստակեցի, ասում է թագաւորին Ս. Գրիգոր, և ինձէն զիմ վաստակս ապախտ ոչ արարի, զի այնմ տէր է հատուցանող բարեաց»:

Անշուշտ թագաւորին քաջ ծանօթ էին Ս. Գրիգորի հաւատարմութիւնն և անձնուիրութիւնը մարմնաւոր ծառայութեան մէջ, բայց երկուսի պայքարն այլ ևս այդ մարմնական աշխարհի սահմանների մէջ չէր: Մէկն աղաղակում էր թէ պէտք է պաշտօն մատուցանել «մեծի Անահատայ տիկնոջն, որ է փառք սղզիս մերոյ և կեցուցիչ, որով կեայ և զկենդանութիւն կրէ երկիրս Հայոց», միւսն ընդդիմա-

խօսում է համարձակ թէ «փոխանակ Աստուծոյ, յորոյ ի բարիսոց վայելէք, պաշտեք զփայտեղէնսոց և զքարեղէնսոց և զոսկեղէնսոց և զարծաթեղէնսոց, զոր Աստուծոյ կարգեալ է ի սպաս և ի պէտս և ի փառաւորութիւն մարդկանն»* Բրիտտոսի պաշտօնէի խօսքերն առաւել ևս զօրաւոր էին հնչում հեթանոսների ականջում: Երբ ըսում էին նորանից թէ «մեր կեանքս չէ յուսահատութեամբ, զի պաշտեմք զկենդանին, որ կարող է զկենդանութիւն տալ մեզ, յորժամ եւ կամի, զի թէ պէտեւ մնանիմք, կենդանի եմք»:

ԶՆԷր էր թագաւորը խոփտարար անարգում Ս. Գրիգորի պաշտած կրօնը. զՆԷր էր նա հեոցհետէ զօրացնում իւր սպասաւայիբները, հեթանոսական հնարագիտութեան բոլոր տանջանարանները պատրաստելով: Աստուծոյ արեղակր ծագել էր Հայոց համար և նորա խոստովանող կարապետն անօրինակ համբերութեամբ յոռւաջ փորեց իւր յուսաւոր վարդապետութիւնը, հրաւիրելով մեր հեթանոս նախնիքներին գրկաբաց ընդունելու այն ճշմարիտ յոյսն ու ջերմութիւնը: Վերջին ձիգր թափեց հեթանոսական կարճամտութիւնը բազմաշարժար նահատակին ընկձելու, բայց ո՞վ զարմանք, «թէ պէտեւ ընկալան գտանջանս իւրաքանչիւր որ ի սրբոյն առաջնոց ասում է ս. Եովհանն Ռեկեքերան Լուսաւորչի ներքոյի մէջ, այլ փոքու ինչ և նուազուեք, սղոցիցաւ նսայիտս, այլ ի միում վագրկենի, զիստակցաւ Եովհաննէս, այլ ի քթթեղ ախան, քարկոծեցաւ Ստեփաննոս, այլ առժամայն իսկ, խաչեցաւ Պետրոս, այլ արագ կատարմամբ, սպանաւ և Պաւղոս, այլ ի նմին ժամու, չարչարեղան մարտիրոսքն պէսպէս հնարիք, բայց ամենեքեան ոչ միով օրինակաւ, այլ զանազանապէս ըստ պատահման ժամանակին և հնարից բռնաւորացն, իսկ սրանչելիս այլ վկայ եւ հայր անոր քան զմիտս եւ զխորհուրդս մարդկան վերամբառնայ հրաշիւք, վասն զի զամենայն տեսակս չարչարանաց, զոր ամենեքեան ընկալան, իրրև յօտարի ուրուք մարմնի՛ յանձն իւր ընրէր քաջութեամբ»:

* Ազգամեզեղոս, Ծ. 2, եւմ: Կ. Սոփեքը Հայկակ. Կ.

Այս անընկճելի ս. խոստովանողին վիճակուեցաւ մինչև իսկ փախուիլ նաև Արտաշատու խոր և խաւարչտին վիրապի մէջ. Հայոց ապագայ լուսաւուն երկա՛ր երկա՛ր տարիներ¹ արգելուեցաւ այդ տարօրինակ բանտի մէջ աքնելու և երկնելու Հայոց հոգեւոր վերածնութեան ապագան: Երկնաւոր հրաւիրակի ձայնին հետեւելով, նա ընդունեց, ի վերջոյ, կոչումն հոգեւոր մշակի, երկրագործի, սերմանացանի, որի քրտանց ասպարէզն էր Հայոց երկիրն, և աշխատութեան նպատակը՝ մի ամբողջ ազգու աշխարհ ազատել հեթանոսական կուրուքիւնից: «Նշխարմանեա՛ն սերմահասն քաջ, գեղեցիկս աւետարանին լուսոյ, ել անկեա՛ն մշակդ քրտնեալ, գործն կենաց, զողկոյզն ծաղիկեալ զմշակեալն ի Հօրէ գարիւն խաղողոյն վիայեալ սուրբ աջովդ» կոչում է երկնային ձայնը ս. Հռիփսիմեանց բերանով խոր վիրապի արգելականին: ² Բողոքաւոր աշխարհ, երջանիկ վիճակ, որ, կարծես, կարողացել է միայն ս. խոստովանողի մեծ համբերութեան օրինակն զգնուել և դարեր շարունակ ապրել ու գործել այդ համբերութեան ոգւով:

Նրբ մենք այն մեծ խոստովանողի Մտին ի վիրապն յիշատակը կատարելու բարերազուծիւնն ենք վայելում արդեօք մի վարկեան մասձեցի՛նք զգացի՛նք, որ 1600 տարի յառաջ այս մի անաշխարհիկ և օտարական, կրնց Հայոց վերածնութեան և վերակենդանութեան այն ծանր երկունքը, որի շնորհիւ կեանք ու կենդանութիւն վախելց Հայ ազգը: Նթէ զգացի՛նք, ապա և պարագ ունինք շնորհելու նոյն համբերութեան օրինակը և երախտագրտ հոգւով պահպանելու նորա անօրինակ քրտանց արգիւնքը: Չմոռանանք այն պատգամը, որ Խոսրովիլուխա ընդունեց իբրև յայտնութիւն Աստուծոյ. ³ «յղևմիք գուք ի քաղաքն Արտաշատ ամեկ անտի զկապեալն Գրիգորիոս. նա եկեալ ուսուցէ ձեզ զլեռ ցաւոցդ ըծշկութեամբ:»

11. 11.

ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ԳՐՈՒՆԻԿՈՒՄ

ԿԱԹՈՒԻԿ ԵԿԵՂԵՅԻ

— Աւոն ԺԳ. պապը կարևոր է համարել մի նոր քննութիւն և սահմանադրութիւն հրատարակելու արգելուած գրքերի (ինդէքս) վերաբերութեամբ: Այդ սահմանադրութեան յառաջարկում պապը խօսում է մեր ժամանակույ շանսանձ գրչաւորութեան և փառ գրքերի մեծաքանակ տարածման մասին: Անասակար գրքերի մասին իրենց գատաւժիռը կարգացել են արդէն իսկ Վլէքսանդր Զ. Աւոն Ժ. Պօղոս Գ. և այլ պապերը, սակայն ժամանակների փոփոխութեան պատճառով այժմ ևս կարևոր է մի նոր քննութիւն և նոր ուղեցոյց վրնասակար գրքերի վերաբերութեամբ, ուստի և ինքը ՉԳ յօդուածից բաղկացած մի նոր սահմանադրութիւն է տալիս՝ արգելուած գրքերի տեսակները որոշելու համար:

Պապական այս սահմանադրութիւնը տան գլխի է բաժանուած, որոնք են. ա) արգելումն առաքելոց գրքերի, հերձուածողների և այլ մատենագիրների շարագրութիւնների. բ) արգելուած հըրատարակութիւններ և թարգմանութիւններ ս. Գըրոց. գ) արգելումն զանազան ազգային լեզուներով թարգմանութիւնների. դ) լիտի բովանդակութեամբ գրքերի արգելումն. ե) արգելումն այն մասնաւոր հրատարակութիւնների, որոնց մէջ սրբազան իրեր են ծաղրուում. զ) սրբոց պատկերների և թողութեան թղթերի մասին. է) աղօթից և ժամանակագրութեանց գրքերի մասին. ը) պարբերական հանդէսների և թերթերի մասին. թ) արգելուած գրքեր ունենալու և կարգալու իրաւունքի մասին. ժ) մատնութիւն վնասակար գրքերի դոյութեան մասին:

Այս գլխների մէջ առանձինն յիշատակուած են արգելուած գրքերի տեսակների և բովանդակութեան մասին: Հետաքրքրական է որ արգելուած գրքերի մէջ են բոլոր Աստուածաշնչի ընկերութեանց հրատարակած և ոչ կաթոլիկների ձեռքով թարգմանուած ս. Գրքերը:

Այս որոշումներից յետոյ հինգ գլխների մէջ, որոնք բաժանուած են 19 յօդուածների, պապը հոգեւոր զրաքննութեան կանոններն է սահմանել:

— Այս տարուան մայիս ամսին լինելիք եկեղեցական ժողովի (կոնսիստորիում) համար պատրաստութիւններ են տեսնուում: արդէն իսկ տեղեկագրեր են ներկայացուած պապին մի քանի քրիստոնեայ վկաների մասին, որոնց պապը պէտք է սրբութեան աստիճանին արժանի հրատարակէ: Զարմանալի չէ՞ արդեօք, որ մեղաւոր մարդիկ են

1. Ազաթանգեղոս ԺԱ. ԽԲ.
 2. Մ. Խոր. Ներքող Հռիփսիմեանց.
 3. Ազաթ. Ի.